



**ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

7 դեկտեմբերի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Նովիաննիսյանի

Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի

Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սամվել Մնացականյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սամվել Մնացականյանը 24.11.2011թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՆՏ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը, ՆՏ Սահմանադրության 19, 92 եւ 93, 94, 97-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել եւ ՆՏ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված մեկնաբանությամբ ՆՏ Սահմանադրության 19, 92 եւ 93, 94, 97-րդ հոդվածներին եւ/կամ Սահմանադրության 1-ին հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել կամ ՆՏ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2, 4-րդ ենթակետերը դիմումում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ՆՏ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել»:

Դիմողի կարծիքով՝ իրավակիրառական պրակտիկան ՆՏ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ պարբերություններում ձեւակերպված դրույթներին հաղորդել

է այնպիսի իմաստ, ըստ որի՝ խնդրո առարկա դրույթները հնարավորություն են տալիս դատական ակտերի բողոքարկման վարույթից դուրս եւ դատավարության կողմ չհանդիսացող անձի պահանջով քննության առարկա դարձնել օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի իրավազափոխությունը, հանգել՝ դատական ակտ կայացրած դատավորի համար իրավական բացասական հետեւանքներ առաջացնող եզրահանգումների:

Դիմողը նշում է, որ դատավորի կայացրած որոշումը կարելի է կասկածի տակ դնել միմիայն բողոքարկման վարույթի միջոցով, եւ որ ցանկացած այլ գուգահեռ համակարգեր, որոնց շրջանակներում գնահատվում են դատավորի կողմից արդեն գնահատված եւ մեկնաբանվում են դատավորի կողմից արդեն մեկնաբանված փաստերն ու իրավական նորմերը, անհրաժեշտ է վերացնել:

Դիմողը գրնում է, որ կարգապահական պարասխանադատության նախապայման պետք է հանդիսանա վերադաս դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու արդյունքում հայտնաբերված կոպիտ խախտման հանգամանքը: Ուստի վերադաս դատարանին ուղղված բողոքի բացակայության եւ դատական ակտի բեկանման կամ փոփոխման փաստի բացակայությունը, ինչպես նաեւ իրավունքի խախտման «գոհի» համար իրավական հետեւանքի բացակայությունը պետք է բացառեն կարգապահական վարույթի հարուցումը եւ դատավորին կարգապահական պարասխանադատության ենթարկելը:

Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը միեւնույն գործի շրջանակներում, միեւնույն հողվածների դրույթների սահմանադրականության հարցերով ՏՏ սահմանադրական դատարան է դիմում արդեն թվով 2-րդ անգամ:

Առաջին անգամ դիմողը ՏՏ սահմանադրական դատարան է դիմել 13.09.2011 թվականին՝ վիճարկելով ՏՏ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերի սահմանադրականությունը: ՏՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը 2011 թվականի հոկտեմբերի 6-ին ՍԳԳԿՈ/1-23 որոշմամբ մերժել է Ս. Մնացականյանի դիմումի ընդունելիությունը՝ վերոնշյալ հոդվածների դրույթների սահմանադրականությունը վիճարկելու մասին՝ այն պարճառաբանությամբ, որ դիմումն ակնհայտ անհիմն է եւ դիմողը բարձրացրել է վիճարկվող դրույթների կիրառման իրավազափոխության հարց՝ նշելով, մասնավորապես, որ «... դիմողի պնդումներն առ այն, որ խնդրո առարկա դրույթները հնարավորություն են տալիս դատական ակտերի բողոքարկման վարույթից դուրս եւ դատավարության կողմ չհանդիսացող անձի պահանջով քննության առարկա դարձնել օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի իրավազափոխությունը, հանգել՝ դատական ակտ կայացրած դատավորի համար իրավական բացասական հետեւանքներ առաջացնող եզրահանգումների»

կամ «...ցանկացած այլ գուգահեռ համակարգեր, որոնց շրջանակներում գնահատվում են դատավորի կողմից արդեն գնահատված եւ մեկնաբանվում են դատավորի կողմից արդեն մեկնաբանված փաստերն ու իրավական նորմերը՝ անհրաժեշտ է վերացնել»՝ ակնհայտ անհիմն են եւ իրենց բովանդակությամբ սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում»:

Դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս որպես նոր փաստարկ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ ներկայացրել է հետեւյալը. «... կարգապահական պարասխանաբանության նախապայման պետք է հանդիսանա վերադաս դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու արդյունքում հայտնաբերված կոպիտ խախտման հանգամանքը: Ուստի եւ վերադաս դատարանին ուղղված բողոքի բացակայության եւ դատական ակտի բեկանման կամ փոփոխման փաստի բացակայությունը, ինչպես նաեւ իրավունքի խախտման «գոհի» համար իրավական հետեւանքի բացակայությունը, պետք է բացառի կարգապահական վարույթի հարուցումը եւ դատավորին կարգապահական պարասխանաբանության ենթարկելը»: Դիմումի ուսումնասիրության արդյունքներով դատական կազմը գտնում է, որ դիմողի վերոնշյալ պնդումը ոչ թե իր բովանդակությամբ նոր իրավական փաստարկ է հանդիսանում, այլ ընդամենը նախկին դիմումում արտահայտված դիրքորոշումը հիմնավորող եւս մեկ, լրացուցիչ փաստարկ է՝ ներկայացված մյուս փաստարկների շարքում:

Դիմումի բովանդակության ընդհանուր փորձաքննությունը վկայում է, որ կոնկրետ փյույթով դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապարասխան դատական ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ:

Տիմք ընդունելով ՏՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, ինչպես նաեւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով եւ 69-րդ

հողվածի 7-րդ մասով, ՆՆ սահմանադրական դափարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՆՆ սահմանադրական դափարանի թիվ 1 դափական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Սամվել Մնացականյանի անհափական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ



7 դեկտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-29